



« 14 » հուլիսի 2009թ.

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 93

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ  
26-ի N31 ՀՐԱՄԱՆԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1294-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 12-րդ կետի «դ» ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2009 թվականի մարտի 26-ի «Բնակարանային ապահովման և բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով աջակցություն ու բնակարան (բնակելի տուն) ստացող անձանց ցուցակները հաստատելու և բնակարանի գնման վկայագրի տրամադրման համար լիազորված անձ նշանակելու մասին» N31 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) հրամանի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Լիազորել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմի բնակարանային ապահովման, բնակարանային ֆոնդի կառավարման և կոմունալ քաղաքականության վարչության պետ, բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման և բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում բնակարան (բնակելի տուն) գնելու համար աջակցության տրամադրման և բնակարանների (բնակելի տների) հատկացման հանձնաժողովի քարտուղար Եվգենյա Աթայանին՝ Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին իրականացվող «Բնակարանային ապահովում՝ բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով» ծախսային ծրագրի շրջանակներում անհատույց պետական ֆինանսական աջակցություն ստացող անձի և մարզպետի միջև կնքված պայմանագրի համաձայն, տրամադրելու բնակարանի գնման վկայագիր:»:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունն իրականացնում են անձամբ:

Նախարար՝

Վ.Վարդանյան

« 14 » հուլիսի 2009թ.

ք.Երևան